Արձանագրություն 3

«ԳՀԱՊՁԲ-ԳՊՁ-ՁԻԱՀ-17/3» ծածկագրով գնանշման հարցման ձևով գրենական պիտույքների և գրասենյակային նյութերի գնման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստի

Անցկացման վայրը՝ ք.Երևան, Աճառյան 2, «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ, 2-րդ հարկ, 207 սենյակ
Անցկացման օրը՝ 14 դեկտեմբերի 2017թ.
Անցկացման ժամը՝ 15:00
Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝	Սոֆիա Գրիգորյան
Հանձնաժողովի անդամներ՝	Ռիմա Թումասյան
	Մերի Մարկոսյան
	Աշոտ Առաքելյան
	Տիգրան Հովսեփյան
Հանձնաժողովի քարտուղար՝	Գևորգ Խանոյան

I. Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերի գնահատման մասին

(նախագահ՝ Սոֆիա Գրիգորյան)

Ընդունել ի գիտություն, որ

1.1 ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե առաջին տեղն զբաղեցրած մասնակիցների՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ հարցում ուղարկելուց հետո սահմանված ժամկետում (12.12.2017թ.) ստացել ենք եզրակացություն, համաձայն որի մասնակիցները՝ «Սմարթլայն» ՍՊԸ-ն և «Կապիտալ Քոնսթրաքշն» ՍՊԸ-ն չունեն ժամկետանց հարկային պարտավորություններ և մասնակիցների կողմից ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող:

1.2 Հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված առաջին տեղը զբաղեցրած մասնակցի ներկայացված փաստաթղթերի գնահատման թերթիկները, համակարգողն ամփոփեց ընթացակարգի մասնակցի հայտի գնահատման արդյունքները, ինչն արտացոլված է ստորև ներկայացված աղյուսակում.

N h/h	**Գնահատման չափանիշը**	**Գնահատման արդյունքը**	
		«Սմարթլայն» ՍՊԸ	«Կապիտալ Քոնսթրաքշն» ՍՊԸ
1.	Հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապա-տասխանության վերաբերյալ	համապատասխանում է	համապատասխանում է
Ընդհանուր գնահատականը		**համապատասխանում է**	**համապատասխանում է**

Հանձնաժողովը որոշեց.

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի պահանջների համաձայն, «Սմարթլայն» ՍՊԸ-ի և «Կապիտալ Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը գնահատել բավարար և առաջին տեղ զբաղեցրած մասնակցին հայտարարել ընտրված մասնակից՝ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով.

N 6, N 10, N 11 և N 14 չափաբաժինների համար «Սմարթլայն» ՍՊԸ-ին:
N 15 չափաբաժնի համար «Կապիտալ Քոնսթրաքշն» ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

II. Հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին

(նախագահ՝ Սոֆիա Գրիգորյան)

2.1 Հանձնաժողովը որոշեց.

ա) ընտրված մասնակիցների հետ պայմանագրեր կնքել Օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետի ավարտից հետո: «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում

պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը էլեկտրոնային ձևով գնումների գործընթացի բոլոր մասնակիցներին ուղարկելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը (15.12.17թ. մինչև 19.12.17թ.):

բ) հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

III. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(նախագահ՝ Սոֆիա Գրիգորյան)

3.1 «ԳՀԱՊՁԲ-ԳՊՁ-ՁԻԱՀ-17/3» ծածկագրով գնանշման հարցման ձևով գրենական պիտույքների և գրասենյակային նյութերի գնման արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագիր կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող աշխատանքային օրը ժամը 15:00-ին, հասցեն՝ ք.Երևան, «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի շենքում, Աճառյան, 207 սենյակում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները, ազգանունները և ստորագրությունները

Հանձնաժողովի նախագահ՝	Ս.Գրիգորյան	(ստորագրություն)
Հանձնաժողովի անդամներ՝	Ռ.Թումասյան	(ստորագրություն)
	Մ.Մարկոսյան	(ստորագրություն)
	Ա.Առաքելյան	(ստորագրություն)
	Տ.Հովսեփյան	(ստորագրություն)
Հանձնաժողովի քարտուղար՝	Գ.Խանոյան	(ստորագրություն)